## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Հուլիսի 7-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ ողջունի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:*

⁂

*Հուլիսի 14-ին, կիրակի. - ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ Հավուր պատշաճի քարոզ խոսեց:*

⁂

*Հուլիսի 15-ին, երկուշաբթի. - Յիշատակ մեռելոց:*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբգար արղ. Հովակիմյանը:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն վասն Համորեն ննջեցելոց:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

⁂

*Հուլիսի 21-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Տրդատ արղ. Մարտիրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ Հանգամանալից քարոզ խոսեց:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

⁂

*Հուլիսի 28-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ արղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ Հանգամանալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

⁂

*Օգոստոսի 4-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Արտակ արղ. Տիգրանյանը և «Հայր մեր»-ից առաջ Հանգամանալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:*

⁂

*Օգոստոսի 11-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան արղ. Ժամկոչյանը և «Հայր մեր»-ից առաջ Հանգամանալից քարոզ խոսեց:*

⁂

*Օգոստոսի 18-ին, կիրակի. - ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ Հավուր պատշաճի քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց խաղողօրհնեքի արարողություն Հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի:*

⁂

*Օգոստոսի 19-ին, երկուշաբթի. - Յիշատակ մեռելոց:*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գյուրճյանը:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն վասն Համորեն ննջեցելոց:*

⁂

*Օգոստոսի 25-ին, կիրակի. - Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վանկուվերի Ս. Աստվածածին եկեղեցու Տ. Գեղարդ քհն. Կարապետյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:*